

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35-րդ ՏԱՐԻ

1886 ՄԱՅԻՍ 3

ԹԻԻ 3820

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 3 ՄԱՅԻՍ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՐԷԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Ընթերցողքը կը յիշեն անշուշտ Բարիզի մէջ վերջերս հրատարակեալ գիրք մը, շեքեալ Ֆրանս անուամբ, հեղինակութիւն Պ. Տաւադոնի: Շատ քիչ գործեր այնքան աղմուկ եւ այնքան յուզում յարուցած էին: Քանի մ'աւուր մէջ առաջին տպագրութիւնն սպառեցաւ եւ հրատարակիչն ստիպուեցաւ երկրորդ անգամ տպել զայն: Կը հաւատեն թէ յանձնարարութիւնք քսան հազարը կ'անցնին: Արդարեւ, Պ. Տաւադոնի գործն հանրային կարծիքն հետաքրքրելու բնութիւնն ունի. զայրացկոտ ատելութեամբ ու մոլեռանդ կրքով կը յարձակի Ֆրանսայի ամենէն բարձր անձնաւորութեանց դէմ, ամեն անոնց դէմ որք իրենց գրչին ծայրով կամ իրենց անհատական ճարտարութեամբ յաջողած են կարեւոր ու փայլուն գիրքեր բռնել ընկերութեան ու գրականութեան մէջ, եւ որոց միակ յանցանքը կը թուի լինիլ հրէական ծագում մ'ունենալ կամ համակրութիւն տածել իսրայէլի թողանց համար: Ֆրանսական գրիթէ ամեն թերթերը խտիւ պարսաւեցին Պ. Տաւադոնի գիրքը, դատաւիտելով նորա միջնադարեան գաղափարներն ու կղերամիտ տեսութիւնները:

Սակայն ի՞նչ է այդ հրէական խնդիրն, որ պարբերաբար երեւան կ'ենէ, այսօր ի Ֆրանսա, երէկ ի Ռուսիա, ի Գերմանիա,

ի Պուլկարիա, վաղն ով գիտէ ո՛ւր, եւ ոյր աղետալի հետեւանքներն մեզ կը յիշեցնեն միջին դարուց հալածանքներն: Ինչո՞ւ է որ հակառակ այդ խոչընդոտներու, Հրեայն այսօր աշխարհիս տէրը դարձած է իւր դրամով եւ անտի բղխող ազդեցութեամբ: Ի՞նչ օգուտներ ունին այն ամեն զրկանքներն որոց կ'ենթարկուին Ապրահամու թուներն ամենուրեք: — Հաւաստի կրնաք լինիլ թէ ինձմէ հարիւրապատիկ աւելի լաւ կը պատասխանէ այս հարցմանց Ֆրանսացի նշանաւոր մատենագիր մը, Պ. Անադոլ Ֆրոնանս, Թաւի վերջին թիւերէն միոյն մէջ: Աւասիկ Թաւի քրոնիկագրին յօդուածոյն մէկ քանի կտորները:

«Առաքեալի եւ երազատեսի խանդավառ գործ մը, անկապակից, արտառոց, կատաղի գիրք մը, հազար հրաբորբոք էջերով, յարդեայ ջահի մը պէս Բարիզի վրայ նետուեցաւ, եւ աւասիկ գլուխները բռնկած են:

«Հրէական խնդիրն, որ հանգչած էր, կը պայթի սաստկութեամբ: Անհուն խընդիր մ'է այս, չփոթ, խաւարահած, և զոր կրքերն աւելի եւս պիտի մթագնեն: Անոր մօտենալուդ պէս, անճրկած կը մնաս:

«Ի՞նչ է իսրայէլն. — Յեղ մ'է, կը պատասխանէ Պ. Տաւադոն: — Կրօնք մ'է, կը պատասխանէ Պ. Ռընան:

«Կարելի չէ գիտնալ թէ ո՛րչափ Հրեայ կայ ի սփիւռս աշխարհի: Մալդ-Պրէօն կ'ըսէ 3 միլիոն. Աստուածաշուշի ընկերութիւնն՝ 2,500,000. Գալիլէի Մալաշին՝ 3,260,000. Կրէպէրկ եւ Բինքէնսըն՝ 3 միլիոն. Հասէլ՝ 3 միլիոն 930,000. Հէրլէմսն՝ 6,598,000. Իւնիֆ-Մառնէն՝ 9 միլիոն: Կարելի չէ գիտնալ թէ ո՛րչափ Հրեայ կայ ի Ֆրանսա: Պաշ-

տօնական վիճակագիրը կ'ըսեն 45,000 • Պ. Թէոտոր Բէյնախ, 1884 ին, կ'ըսէր 63,000 • Անի-է-տէ Ղաւիլի Խլաւիլի, 1885 ին, կ'ըսէր 80,000 էն 85,000: Կարելի չէ գիտնալ թէ ո՞րքան Հրեայ կայ ի Բարիլ: Տալին կը հաշուէ 24,319 եւ Պ. Բէյնախ՝ 40 հազար: 1872 էն 1880, բարիգաւնակ Հրէից յուշարկաւորութեանց թիւէն կը հետեւցուի թէ Հրեայք այդ ութն տարուան միջոցին կրկնապատկած են Փրանսական ոստանին մէջ: Վերջապէս, վիճակագիրն, այս պարագային մէջ, որպէս յաճախ այլուր, անճշմարտանման, անստոյգ եւ հակասական է: Յառաջիկայ մարդահամարն այս մասին բան մը չը պիտի ուսուցանէ մեզ, որովհետեւ կրօնընեն ի նկատ չը պիտի առնուին:

« Պ. Էտուառ Տուրման մեր ամենուս չը տեսած տեղն Հրեայներ կը տեսնէ: Հրեայներ կը տեսնէ բրիտանից մէջ, նոյն փակ լաթովիկ եկեղեցականաց մէջ: Ըստ իրեն, Մառա հրեայ էր, Նարոլէոն հրեայ էր, Կամպեղդա հրեայ էր: « 1870 ի պատերազմը, կ'ըսէ, հրէական պատերազմ մ'է: » Հրեայներուն կը պարտինք Թունուզի եւ Թոնքինի գործերն: Անոնց համար է միայն որ Լորտ Պիքոնսֆիլտ ձեռնարկեց Աֆղանեան պատերազմն: Հրէից մօտը կը տեսնէ արհեստական տաղնապին եւ ընկերվարականութեան յառաջդիմութեան մէջ: Վերջապէս հրեայներով պաշարեալ է:

« Բայց, եթէ հրեայներն ամեն ինչ չեն ընեն, գէթ ստոյգ է թէ ամենուրեք են: Ելեւմտից մէջ են, ճարտարութեան մէջ, գիտութեան մէջ, դաստիարակութեան մէջ, բանական մէջ, վարչութեան մէջ, դատարանաց մէջ, խորհրդարանին մէջ, կառավարութեան մէջ • Խորայէն ամենուրեք է: Ի՞նչ ոգւով, ի՞նչ յոյսերով: Ի՞նչ է իւր նըպատակը: Նուաստութեան եւ թշուառութեան մէջ երազած է աշխարհիս թագաւորութիւնն • այսօր որ հարուստ եւ հզօր է, ետ կը կենայ այդ երազէն: Ընդհակառակն, կը կարծէ՞ թէ ժամանակները մօտ են: Միտիքակա՞ն իմաստով կ'ըմբռնէ իւր հարց խոստացեալ այդ թագաւորութիւնն • ընդհակառակն, դրական եւ նիւթակա՞ն իմաստով: Ի՞նչ պղծամարք կը խորհի արժանի լինիլ նմա • ի՞նչ միջոցներով հասնիլ նմա: Ո՛ւր, ե՞րբ, ի՞նչպէս պիտի վերականգնէ տաճարը:

« Անտարակոյս, հետաքրքիր ենք գիտնալու զայս ամենայն • հետաքրքիր ենք կըռահելու Խորայէլի գաղտնիքը: Այլ այս հետազոտութեան համար պէտք է հանդարտ ու համբերատար միտք մը եւ այն բարեյօթարութիւնն առանց որոյ ամեն ճշմարտութիւնք սխալներ կը դառնան: »

Պ. Անադոլ Ֆռանս կ'անցնի ապա խօսիլ Հրէից ապագայ յոյսերուն վրայ:

« Անշուշտ Հրէից մէջ կան մէկէ աւելի անձինք որք կ'երազեն Խորայէլի թագաւորութեան վերականգնումը: Բարեպաշտ ուղեւորներ չըլած են աշխարհս համայն՝ գտնելու համար կորուսեալ ցեղերուն հետքերը: Մոլտավալի Բենիամին հրեայն այս հետազոտութեան համար խուզարկեց զԵգիպտոս, Սուրիա, Քիւրտիստան եւ Պարսկաստան: Մարտոքէ ըստուինն պրպտեց Սահարան • Կ'ըսուի թէ այսօր քողոր ցեղերը գտնուած են, ի բաց առեալ Յուդայիւնը: Գաղ ամենէն վերջը գտնուեցաւ, Նեստորականաց եւ Աֆղանաց խառնեալ: Դադրեցնել իրենց երկար ծաւալումն, համախմբել զանա ընդարձակ պետութեան մը մէջ, վերականգնեալ տաճարին շուրջն որ այս անգամ պիտի տեսէ ցորչափ արեգակն, աւասիկ ի՞նչ կը մտածեն, կրօնական զառանցանքի մը մէջ, բանի մը խանդավառ մենակեացներ: Եւ ո՞վ կը համարձակի պարսաւել զայնս: Ո՞վ կ'իշխէ նախանձիլ անոնց այսքան վեհանձն յոյս մը: Այլ հրեայ ժողովուրդն հնազա՞նդ է այդ բանի մը անձանց ձայնին: Չեմ կարծեր:

« Հրեայները թափառական են: Երբ հայրենիք մ'ունէին, չէին ուզեր ապրիլ անդ: Տիտոսի աշխարհակալութենէն շատ առաջ, ցրուած էին • հրէաբնակ թաղերը կը ծածկէին լատինական աշխարհն, եւ Երուսաղէմինն ո՛չ ամենէն հարուստ եւ ո՛չ անենէն բազմամարդն էր: Ճշմարտութիւնն այն է թէ ամեն ժամական սքանչելապէս յարած են թափառաշրջիկ կեանքի մը: Ինչո՞ւ համար յանկարծ պիտի զգան հաստատաբնակ լինելու պէտքը: Ո՛ւսկից պիտի դայ իրենց՝ պարտէզին մշակելու այդ յանկարծական փափաքը:

« Աւելորդ է աւելի երկար խօսիլ: Յիմարութիւն է կարծել թէ Հրեայք պիտի մեկնին Ֆրանսայէն, պիտի մեկնին Եւրո-

պայէն իրենց յօժար կամօք, վերադառնալու համար այդ անապատն ուսկից այնքան գէշ յիշատակ մը պահած են: Երուսաղէմ չպիտի վերածննդի իւր նիւթական իրականութեամբ: Եւ անտարակոյս այդ անիրանալի խորհրդոյն իրականացմամբ չէ որ պիտի լուծուի հրէական խնդիրն:

«Պ. Տոմարն լուծում մը կ'առաջարկէ: Խորհուրդ կուտայ վերստին ձեռք առնուլ հին միջոցներն, աքսորն եւ ընչից գրաւումը: Խորհուրդ կուտայ զայսուսիկ բացայայտ պարբերութեամբք: քօղածածուկ խօսքերը չը սիրեր: Համոզուած թէ Հրեայներն օր մը պիտի վռնան զմեզ քրիստոնէայ Գալլիայէն, կը թախանձէ քրիստոնէից՝ անոնցմէ առաջ գործի սկսիլ:

«Վարհամարհենք, կ'ատենք այդ վայրագ խօսքերը: Ա՛լ այս ժամանակիս չեն վերաբերիր: Հաւատքը կորսնցնելով, բռն լինելու ամեն իրաւունք կորուսինք: Բաւ է որչափ որ տասնեւութ դարու չափ եկեղեցին, հարուածելով սինաիոկան, պատառեց իւր մօր ծոցն: Իսրայէլ բաւական թանկագին վճարեց աշխարհիս Աստուած մը տուած լինելու պատիւը: Չէ՞ք տեսներ թէ իւր ուժը կը պարտի բաշտ չարչարանքներուն: Չէ՞ք տեսներ թէ վշտին մէջ միտած է: Չէ՞ք տեսներ թէ մեծցած է հալածման մէջ: Ա՛հ, քրիստոնէայք, ի՛նչպէս հանձարեղ դարձուցիք Իսրայէլը: Հողին տէր լինելն արգիլելով նմա, ուսուցիք դրամին հղորութիւնն, որոյ ներքեւ զձեզ կ'ընկճէ այսօր: Հնձելու դաշտ մը չունենալով ընդ տրեգական, ուրիշ դրամագլխով մը ապրեցաւ: Ոսկիներ դրաւ քսակի մը մէջ եւ վախառութիւն ըրաւ: Անոր ոսկին ձեռք անցունելու համար, ակռայներն եւ եղունգները բրցուցիք: Այն ատեն թուղթն հնարեց եւ պանքան հաստատեց: Պէտք է համակերպութեամբ ընդունիլ մեր հարց ժառանգութիւնը: Աւա՛ղ, ներկայն անցելոյն զաւակն է: Քրիստոնէութեան դարերն ստեղծեցին արդի հրեայն: Արհամարհեցիք զայն, խոնարհ է: Հարուածեցիք զայն, խոհեմ է: Կողոպտեցիք զայն, ճարտար է ի հարստանալ: Թշնամանեցիք զայն, երախտապարտ կը թողու զձեզ:

«Իրտեցէք զայն եւ դողացէք: այնպէս է նա որպէս դուք չինեցիք: Բան մը միայն

կը զարմացնէ զիս: Թէ ինչո՞ւ աւելի եւս չատեր զձեզ:

«Ո՛չ, ո՛չ, բռնութեամբ չէ որ ետ պիտի մղուի Իսրայէլի խաղաղ արչաւանքն: Անոնց դէմ մարտնչելու համար, անոնց պէս վաճառական լինինք եւ անոնցմէ աղէկ վաճառենք: անոնց պէս սեղանաւոր լինինք, եւ անոնցմէ աղէկ գիտնանք փոխ տալ եւ առնուլ: Պաշտպանենք մեր ստակը: Հրապարակին վրայ յարձակինք անոնց ստակին դէմ:

«Եւ եթէ, ամեն բանէ վերջ, չը կարողանանք հարստանալ, եթէ չատ յիմար կամ չատ ազատամիտ լինելով չենք կրնար լաւ գործեր տեսնել, թող աղբատ մնանք: Աղբատութիւնը մոլութիւն չէ: Ի գործ դրնենք մեր հանձարն, որպէս նոքա ի գործ կը դնեն իրենցը: Հնարենք, երեւակայենք, մշակենք, աշխատինք մեր ձեռներով, աշխատինք մեր միտքով, եւ մեր բաժինն տակաւին գեղեցկապոյնը պիտի լինի: Մեր մէջէն ո՞վ այնքան ստորին պիտի լինէր որ Պ. տը Ռոշիլտի հարստութիւնը նախամեծար համարէր Պ. Բասդէօուի աղբատութենէն:»

Լ. Բ.

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

ՀՈՂԱՃՃԻ

Ընթերցող, եթէ զբաղած չ'էք, հաճեցէք ինձ հետեւիլ մի քանի վայրկեան սա պարտիպին նրբուղեաց մէջէն: Իմ նպատակն չէ հոս ձեր ուղադրութիւնն գրաւել ո՛չ ծաղկանց բոյրերու եւ ո՛չ ալ տերեւներու հոյլերու վրայ, այլ կ'ուզեմ ձեզ ցուցնել կարգ մը փոքր կենդանիներ որք ցարդ մեր ուղադրութենէն վրիպած են իբր աննշան եւ զզուելի միջատներ: Տեսէք սա խնուշը՝ որ կ'իջնէ սա ծառատունկէն ի վար իւր տնակն ի յուս, եւ անդ խոնջողն որ բարձր կուգայ սա հողին կուշտը եւ նոր բոյս մը կ'որոնէ յուտեստ: քիչ մ'անդին հողաճճին իւր ներքնուղոյն ծակէն ներս կը սողոսկի: ահա այն հողաճճին պիտի լինի մեր ներկայ նիւ-

թըն, այլ առթի թողով պարտեզներու միւս բնակիչներն ուսումնասիրել:

Խնդրին էութեան չսկսած նախ եւ յառաջ մի քանի տողերով ծանօթանանք սոյն միջատն:

Հողաճճին (*Lombricus agricola* կամ *ver de terre*) սողնոց օղակաւորաց ցեղին էր վերաբերի. 10 հարիւրորդամեթր երկայնութեամբ եւ 2-3 հազարորդամեթր լայնութեամբ գլանաձեւ, մերկ եւ մի գոյնով է. օղակներէ կազմուած ըլլալով ձգտական է, որոց միջոցաւ կը յառաջանայ. արտաշնչութիւնն մորթային է. վուրկ աչքէ, սակայն կ'զգայ լոյսն. ընդհանրապէս կաւային հողեր ու պարտեզներ կ'ընտրէ իրեն բնակավայր ուր ոլոր մոլոր գետնուղիներ կը պեղէ:

Հողաճճեաց միակ սնունդն հողաբոյսն է (*Humus*) որ բուսոց եւ կենդանեաց տարբաղադրումէն կը գոյանայ եւ որ հող մը ամենէն աւելի հարստացնող տարրն է:

Այս փոքր սողունը կարծուածէն շատ աւելի գիտական աշխարհի ունի գրաւած է եւ երկայն տարիներ այլ եւ այլ փորձեր եղած են նորա վրայ, եւ սակայն ցարդ վերջին բառն արտասանուած չէ թէ ճճիք օգտակար թէ մնասակար են մշակութեան, եւ ահա այս հարցն է որ այնքան վիճաբանութեանց եւ թեր ու դէմ կարծեաց նիւթ եղած է ի վաղուց հետէ:

Ուրեմն սկսինք հոս մի առ մի թուել յաջորդաբար այն բեր ու դէմ կարծիքներն որք լոյս տեսած են այլ եւ այլ գիտական հանդէսներու եւ գրքերու մէջ:

Գիտենք որ, ընդհանրապէս, հասարակաց գաղափարն աննպաստ է օղակաւորաց այս ցեղին վրայ. պարտիզականէն մինչեւ փոքրիկ մշակն խեթիւ կը նային նորա եւ պատճառն, է՛հ, շատ բնական բան է, նախ եւ յառաջ իր ցրտագրեցիկ շարժումն է, կը պատասխանեն եւ այս է ահա շատերու եւս պատասխանն որք հարեւանցի կերպով քննած են այս միջատն:

Նախ եւ յառաջ, անոնք որ ճճիներու վրայ աննպաստ գաղափար մը կազմած են, կ'ըսեն թէ գոքա բոյսերու արմատները եւ կը ծակեն, սակայն ինչպէս կը կատարեն այդ գործողութիւնն՝ մինչդեռ այս խեղճ սողունը կրծողներու ցեղէն չեն եւ զուրկ

են հարկէ բերանէ (*armature buccale*) . ուստի չեն կրնար իրենց վերագրեալ այս չարութիւնն կատարել:

Սակայն շատ անգամ բանջարեղինաց մէջ երբեմն ծակեր կը նշմարուին զորս այս ճճեաց կը վերագրեն եւ տակաւին այս խնդիր գիտնոց սեղանին վրայ քննուելու վրայ է. թողով զայն, քիչ մը վերջ շարունակենք մեր տեսութիւնն:

Ոմանք կ'առարկեն թէ հողաճճին հողաբոյսով սնանելով հողն կը զրկուի այն յարգի տարրէն, սակայն հողաճճին հողաբոյսն ըստանալէ քիչ յետոյ դուրս կուտայ զայն գրեթէ առջի վիճակին մէջ եւ որ առաւելն է հողաճճին կ'երթայ գետնին խորերէն կը հանէ մակերեւոյթն կը տարածէ զհողաբոյսն. այսպէս այն փոքր սողուն կը կատարէ ինչ որ երկրագործն կը փնայ արօրով, բահով ու բրիչով կատարել եւ մենք կ'ամրաստանենք ճճիներն իբր մնասակար միջատ, մինչդեռ անդին բիւրրոտեայք կամ կարիճք, մշակութեան եւ մարդկան մնասակար կենդանիք, կը վրիպին մեր տեսութեանէն. ասի կը յիշեցնէ մեզ սա առաժն թէ շատ անգամ արդարք կը տուժեն մեղաւորաց տեղ:

Ոմանց ալ առարկութիւնն սա է թէ ճճին ցանուած հողերն եւս տակն ու վրայ կ'ընէ եւ հունտերն տեղերնէն կը տեղափոխէ ի մեծ մնաս բուսաբերութեան, սակայն դիտողներ եւս կան թէ այս տապալումներ զուրկ են կարեւորութենէ եւ թէ ճճին կրկինս կը փոխարինէ իւր այդ մնաս իւր բացած ուղիներով որոց միջոցաւ հողին ներքին խաւերուն մէջ թթուածին կը թափանցէ, որ անհրաժեշտ է հողին բուսաբանական տեսակէտով. նաեւ ճճոյն բացած ուղիք խոնաւ հողերու ցամաքեւրուն կը նպաստեն, որովհետեւ ջուրն կը հոսի անոնց մէջէն եւ ճճին այս կերպով ցամաքեցնողի (*draineur*) պաշտօն կը վարէ:

Վերջապէս դանք ծանրագոյն ամբաստանութեան, այն է թէ ճճիք գետնին խորը թաղուած ածխային հիւանդութենէ վարակեալ ոչխարներու աճիւնն վերստին հողին մակերեւոյթն կը հանեն, եւ այն հողին վրայ արածեալ ոչխարք ախտէն կը վարակուին ի մեծ պատուհաս մշակին. ահա այս պարագայիս մէջ է որ ճճիներու պաշտ-

պան հանդիսացող գիտունք զինաթափ կ'ըլլան : Այսպիսի պարագայի մէջ ճճին բացարձակապէս մնասակար է, ուստի աւելորդ չեմ համարիր հոս թուել զանոնք ջնջելու համար ի գործ դրուած մի քանի եղանակներ : Յրանսայի մէջ այն տեղեր ուր ճճիները ջնջել հարկ դատած են այն համոզմամբ թէ բանջարեղինաց կը մնասեն, արօրին ետեւէն բաղբուր խուժք մի կը ձգեն որք ճճիներու ջերմ թշնամին ըլլալով հողին երեսը եկածներն անմիջապէս կուտան ի կուլ :

Հողն կրաջրելն կամ մոխրելն ալ աղիտաբեր է ճճիններու :

Շատ անգամ ալ հողաճճիներէ անհանգիստ եղող բոյսերուն շուրջը 20 հարիւրորդամետր թանձրութեամբ մամուռ կը տարածեն և բոյսն անմատչելի կը լինի ճճեաց տակաւին այս երեւոյթն գաղտնիք մնացած է գիտնոց :

Փաղով արդ այն ամբաստանութեան թէ ճճիք բանջարեղինաց կը մնասեն, ինչպէս ըսինք տակաւին վերջին բառն արտասանուած չէ եւ այնպէս կը կարծուի թէ խոնդիրն ճճեաց նպաստաւոր ելք մը պիտի ունենայ . պարզենք պատճառն մի քանի տողով :

Երբ ի նկատ առնունք հողաճճեաց կազմուածքն թէ հատիչ բերան չունին, զիւրին է եւթադրել թէ նոքա չեն կրնար բանջարեղէններն ծակել . սակայն մեր եւթադրութիւն տարակոյսի կը փոխուի երբ առնենք բա՛ն եւ քննենք բանջարեղէնի մը արմատներն ու տեսնենք բոլորտիքը վնասացող ճճիներն . ուստի ի՞նչպէս մեկնելու է այս երեւոյթն թէ եթէ նոքա չեն ծակեր, ի՞նչ գործ ունին հոն . ահա դժուար կէտն . սակայն չը կայ բան մը որ առանց պատճառի լինի . մնասեալ բանջարեղինաց քով ճճիներու ներկայութիւնն սա պէս կրնայ բացատրուիլ թէ, կան կարգ մը միջատներ հատիչ բերաններով զինեալ որք բան գործ ըրած են զանոնք ծակել եւ անցնիլ անվէր բանջարներու . ոյն միջատներ ծակած ժամանակնին կը թողուն սոյն բոյսին կտորներն որք կը տարբաղադրին քիչ յետոյ եւ ճճիներու ամենէն աւելի սիրած սնունդն կը լինին . այս է ահա պատճառն որ հողա-

ճճիք կը կուտակին բանջարեղինաց շուրջն . եւ մեք իրենց կը վերագրենք սոյն չարութիւնն :

Ի նպաստ հողաճճեաց մի քանի տողեր եւս եւ յանգ առնենք : Հողաճճիները խիստ կերպով կը պարսաւեն ոմանք ի գիտնոց թէ կենդանեաց համաճարակ հիւանդութեանց վերստին տարածման կը նպաստեն . այս առարկում անիրաւութիւն մ'է . եթէ մի քիչ մտածենք կը տեսնենք որ իրենք գէշ յատկութիւն մը չունին ստորին հողն վեր հանելով . ընդհակառակն առաւելութիւն մ'է սա . մինչդեռ մեք կրնանք աւելի դատապարտել զմարդիկ որք առանց ճճիներու սոյն յատկութիւնն ի նկատ առնելու վարակեալ կենդանեաց դիակն հողին մէջ կը թաղեն, թէպէտ սովորականէն քիչ մը խորունկ . մարդոց անկ է այլ կերպով մտածել հիւանդութեանց միջոցներն անհետացնելու համար . կիցումն եւ կամ այլ տարրաբանական կերպեր կրնային թաղման տեղ բռնել :

Վերջապէս ի մի ամփոփելով մինչեւ հոս գրուածներն կրնանք եզրակացնել թէ գիտունք հողաճճեոյն լաւ կամ գէշ յատկութիւններ ընծայած են . բարեմասնութեանց վրայ այլ եւս տարակոյս չը կայ . սակայն ինչպէս ի վերեւ պարզցինք հողաճճեաց վերագրուած գէշ յատկութիւնք տակաւին գիտնոց օրակարգին մէջ են եւ թէ նժարն տակաւ առ տակաւ կը հակի ի նպաստ հողաճճեաց . այնպէս որ ես կ'առաջարկեմ իմ ազնիւ ընթերցողին այսուհետեւ հաշտութեան դաշն կուել սոյն օղակաւոր սողունի հետ եւ բարեմաղթել որ գիտունք մի նոր կերպ գտնեն ածխային հիւանդութեան միջոցներն անհետացնելու, որպէս զի Աբէլայ հեղ անասուններն այլ եւս անվտանգ արածին ակնապարար մարգերու մէջ :

ՍԱՐԳԻՍ Կ. ԿԻԻՄՇԵԱՆ

ՆՈՐԱՎԷՄ

ԵՐԶԱՆԻԿ ՄԱՐԴ ՍԸ

Ա .

Լուսինի քարատափին վրայ հսկող խաղաղութեան պահապանը Սէն գետին ափանց վրայ՝ Որհեստից եւ Քարուղելի կամրջոց մէջ տեղը մարդոց բազմութիւն մը նշմարեցին : Թէպէտ եւ շատոնց լսւեցած՝ սակայն դեռ առաւօտ էր : Յուլիսի մէջ արեւը Փարիզ-ցիներէն առաջ կ'եղնէ : Ուրեմն արտաքին կարգի դէպք մը պէտք էր, որ այդպիսի ընդհանրապէս ամայի տեղ մը ժողովէր ա՛յդ-չափ բազմութիւն ա՛յդչափ կանուխ ժամանակ : Բազմութեան վրայ ո՛չ աղմուկ, ո՛չ անհանգստութիւն եւ ո՛չ ալ շփոթութիւն կ'երեւէր . ըսել է որ մի միայն հետաքրքրութեամբ ժողովուած էր հոն : Այսու հանդերձ հասարակաց խաղաղութեան պաշտօնէից պարտքն էր երթալ այն տեղ, Թէպէտ եւ հոն այն միջոցին ընելիք բան մը չունէին, սակայն գետափանց վրայ պատահած դէպքերն շատ անգամ պատճառ կուտան վարձատրութեանց . հետեւապէս դժուարութիւն մը չունեցան հոն խռնող քանի մը հետաքրքրիւները հեռացնելու, եւ անակընկալ տեսարան մը բացուեցաւ առջեւին :

Մարդ մը փռուած էր գետինն, անշարժ, աչքերը գոցած, բոլորովին մերկ վիճակի մէջ :

— Մեռե՞ր է, հարցուց պահապաններէն մին :

— Ո՛չ, պատասխանեց ներկայից մին կամաց ձայնով մը, կը ննջէ :

Սրդարեւ այս մարդուս դիրքը բնական էր . իւր դիմաց գիծերը բնաւ վիշտ մը չէին յայտնէր . մինչեւ անգամ կը նշմարուէր շնչառութեան շարժումը՝ որով կանոնաւորապէս վեր կ'եղնէր կուրծքը միջոց միջոց :

— Ո՛ր են իւր զգեստները, հարցուց միւս պահապանը՝ աչքերը պտտեցնելով շրջակայից վրայ :

— Ո՛հ, ի՛նչպէս գեղեցիկ է, ըսաւ բարի, հերարձակ, կարճ չափիկ հագած կին

մը . եւ այս դիտողութիւնս ըրաւ առանց չարամտութեան, միայն իւր արուեստական զգացումներ յայտնելու համար :

Ստուգապէս գեղեցիկ մարդ մըն էր այս . դեռ սեւագոյն մազերով շրջապատեալ եւ խնամօք կտրուած բարակ մօրուքով գեղեցիկ գլուխ մ'ունէր : Ոտքերն ու ձեռքերն շատ վայելուչ էին, ակադի նման վարդագոյն եղունգներով, եւ որ ամենէն հագուագիւտն է քաղաքակրթեալ մարդոց մէջ, բաղկաց եւ ազդերաց մէջ ճիշդ համեմատութիւն մ'ունէր : Վերջապէս մարմնոյն սպիտակութիւնը ցոյց կուտար թէ այս մարդս սովորութիւն չունէր այսպէս օդոց անբարեխառնութեան ենթարկուելու :

— Ե՛լ նայինք, գոչեց վայրագաբար պաշտօնէից մին՝ ննջողին թեւը ցոյցելով :

Մարդն արթնցաւ : Աչքերը բանալով բռնաւ զարմացում մը չյայտնեց ա՛յնչափ մարդոց մէջ տեղը գտնելով դինքը, եւ բնաւ չը շփոթեցաւ դտնուած վիճակին վրայ . կամաց մը մատներն աչքերուն վրայ պտտեցուց . յօրանջելու փափաքը զուպեց, ելաւ նստաւ, եւ շատ բնական ձայնով մը հարցուց .

— Ի՞նչ կայ :

— Ի՛նչ կայ մի, բեզի հարցնելու է . ի՞նչ կ'ընես հոգ :

— Կը ննջէի :

— Ա՛յս վիճակիս մէջ ա՛յս տեղ չեն բնանար . ո՛ր են զգեստներդ :

— Զուռնիմ :

— Կողոստեցի՞ս զբեզ :

— Ես մարդու համար ամբաստանութիւն չեմ ըներ . պարզապէս կ'ըսեմ թէ զգեստ չունիմ :

— Այդ կ'երեւի կոր . բայց ի՞նչ ըրիր զգեստներդ :

Այս հարցաքննեալ մարդս շատաբան չէր . իրեն այնպէս թուեցաւ թէ արդէն շատ խօսած էր . և զինքը շրջապատող բազմութեան վրայ անտարբեր հայեցուածք մը դարձնելով բնաւ պատասխան մը չտուաւ . այնուհետեւ :

— Լա՛ւ, երթանք, ըսաւ պահապանը . պաշտօնատեղին երթաւ նէ հոն կը պատասխանես :

Այսպէս ըսելով կը պատրաստուէր մարդն ոտքի հանելու եւ մէկ թեւէն բռնելու,

մինչդեռ իւր ընկերն ալ միւս թեւէն պիտի բռնէր, երբ նշմարեց որ անկարելի էր Փարիզու փողոցներուն մէջէն տանիլ այսպիսի մէկ մարդ մը :

Փարատափին վրայ արդէն խռնեալ հետաքրքիրը՝ որոնց թիւը վայրկեան վայրկեան կ'աւելնար, անշուշտ չալիտի վրիպէին անոր ուղեկցելէ. փողոցներուն մէջ պատահող բոլոր անցաւորը՝ յորս առաւօտեան կեանքը կ'սկսէր զարթնուլ, այս ուղեկցութեան պիտի միանային, եւ տասն հազար հոգիի չափ պիտի գային խռնէին պաշտօնատեղւոյն առաջ. և այնուհետեւ շրջագայութիւնը հաստատել շատ դժուարին պիտի ըլլար :

Յրկու պահապանները խորհրդակցութեան նստան. եւ արագ արագ խօսակցութենէ մը ետքը՝ ասոնցմէ մին զատուեցաւ միւսէն, երթալու ոստիկանատունն եւ հրահանգ խնդրելու, մինչդեռ միւսը պահպանութիւն կ'ընէր վերոյիշեալ մարդուն ըով, որպէս զի չըլլայ թէ փախչի եւ գայթակղութիւն պատճառէ ժողովուրդեան : Բայց որովհետեւ մինակ էր եւ չէր ուզեր հեռանալ իւր բանտարկեալէն, որչափ որ ալ պարզամիտ ժողովուրդը ցրուելու յորդորեց, բնաւ մտիկ ընող չեղաւ : Ասկից զատ, Լուվրի կամ անոր գիմացի Մալաքէ քարափին կամ Սրհեստից կամ Քարուզէլի կամ մըրջոց վրայէն անցնող բոլոր մարդիկ, գետափին վրայ տեսնելով այս անսովոր բազմութիւնը, կուգային հասկնալու եղելութիւնը եւ հոն կը մնային :

Այնպէս որ մէկ քանի վայրկեանի մէջ գետափնը լցուեցաւ հոծ եւ խիտ բազմութեամբ եւ ամէնքը մէկ մէկ կերպ մեկնութիւն կուտային եղելութեան :

Բանտարկելոյն մօտ եղողները տեսնելով մերկ մարդ մը ոստիկանութեան պաշտօնէի մը պահպանութեանը տակ, բնականաբար վարչական բռնապետութեան այս զոհին կողմը բռնեցին, ոմանք ալ ջանացին հետը խօսիլ :

Հարցուցին իրեն թէ անթի՞ էր : Պատասխանեց թէ առջի իրիկունքէ ի վեր բան դրած չէր բերանը : ասի վշտացուցիչ բան մը չէր, որովհետեւ դեռ քանի մը ժամէ ի վեր էր որ առաւօտ եղած էր. բայց մարդոց կարեկցութիւնը շարժեցաւ, եւ լուր տարածուեցաւ թէ այս մարդս ան-

թութենէն եղեր էր այսպէս, եւ ամէն կողմէ բերին անոր հաց, արգանակ, միս եւ դինի : Խաղաղութեան պահապանը անկարող էր իւր բանտարկեալը պահպանելու այնչափ համակրութեանց դէմ. եւ չէր ուզեր ալ ունայն տեղ անգութ երեւիլ. ուստի բանտարկեալը նախաձաշն ըրաւ լաւ փսորժակով, մինչդեռ ուրիշ գթասիրտ անձինք ստակ հաւաքելու կ'ենէին փեղոյր մը պղտըցնելով ի նպաստ այս մարդուս :

— Կ'երեւի թէ վտանգաւոր չարագործ մըն է, կ'ըսէին ոմանք :

— Բնա՛ւ, կը պատասխանէին այլք, ընկըզմեալ մէկն է :

— Ուրեմն ինչո՞ւ համար բռնե՞ր են :

— Որովհետեւ այս տեղ ընկղմիլ արգիլեալ է, կ'ըսէր սրիկային մէկը :

— Զգեստները հանելին պակասութիւն մը, անիրաւութիւն մըն է :

— Ոստիկանութիւնն անիրաւութենէ զատ ուրիշ ի՞նչ կ'ընէ :

Վերջապէս միւս պահապանն ոստիկանատունէն վերադարձաւ ուրիշ պահապաններով եւ պատգարակաւ մը : Մարդը պակեցուցին պատգարակին մէջ, հանգանակութեան գումարն ընդունեցէն վերջը՝ զոր պահեց ձեռքին մէջ՝ զրպան չունենալուն համար. կտանները լաւ մը գոցեցին, եւ ճանքայ ելան ոստիկանատունն երթալու համար : Քանի մը ժամ վերջը՝ կարգն ու կանոնաւորութիւնը հաստատուած էր. բայց խուճա խուճա մարդիկ դեռ կեցան գետափանց վրայ մինչեւ որ արեւը մարը մտաւ, մտածելով որ՝ որովհետեւ կ'սպասէին, բան մը պիտի պատահէր :

Ոստիկանութեան պաշտօնէայն՝ երբ մարդն իրեն տարին, նախ եւ առաջ անոր անունն հարցուց :

— Ես անուն չունիմ :

— Ո՛հ, չէք ուզեր ինքզինքնիդ ճանչընել. այս ծանօթ դրութիւն մի է, սակայն շատ անգամ չյաջողիր : Ո՛ւր կը բնակիք :

— Բնակարան չունիմ :

— Բնականաբար : Ա՛յի ձեր առաջին պատասխանին հետեւութիւնն է : Իսկ եթէ ձեզի հարցնեմ ո՞ւր կից կուգաք, ինձի՞ պիտի պատասխանէք, եւ ո՛չ մէկ տեղէ մը :

— Այո՛ :

— Շատ աղէկ : Ես հիմակ դձեպ Տէքօ

պիտի խրկեմ. բայց չեմ կրնար զձեզ խը-
կել այս վիճակին մէջ: Քիչ մը խօսինք հե-
տերնիդ:

Եւ հրաման պիտի տայր որ այս ձերբա-
կալեալ մարդուն հետ միայնակ թողուն
զինքը, բայց միտքը փոխեց: Խայտառակ եւ
ծաղրական երեւցաւ իրեն խօսակցութեան
սկսիլ մերկ մարդու մը հետ. մարդ խրկեց
իւր տունը որ մէկ հին քանդակ եւ հին
«Էթրի» մը բերեն: Ասի արտաքին կարգի բան
մըն էր. ոստիկանութեան պաշտօնեայ մը
անշուշտ չէր կրնար իւր ծախիւքը հոգալ
այս կերպով ձերբակալեալ մարդոց հան-
դերձները: Բայց մտածեց որ այս բացառիկ
դէպք մըն էր, եւ անշուշտ ամէն ատեն
պատահելիք ընէր, որով այս սկզբ-
բունքիս կապուելու պարտաւորէր: Հիմակ
խնդիրը մնաց զիտնալու թէ արդեօք այս
մարդս պիտի հաւանէ՞ր կամովին հազնելու
իրեն ընծայուած զգեստները: Բարեբաղ-
դաբար բնաւ դժուարութիւն չըրաւ:

Խաղաղութեան պաշտօնէից զնդապե-
տը դիտողութիւն ըրաւ որ, եթէ ոստի-
կանութեան պաշտօնեայն նոյն զգեստներ
տալու բարութիւնը չունենար, կարելի էր
զանի հագուեցնել իւր ծախիւքը. — Դրամ
ունի, ըսաւ:

Արդարեւ, մարդը ձեռքը բացաւ. մէջը
կար 87 Փրահք 50 սանթիմ, որ հաւաքուած
էր հանգանակութեամբ:

— Կրնաք զայդ պահել, ըսաւ պաշտօն-
եայն. դրէ՛ք զրպանս:

Յետոյ դուրս հանել տուաւ զամէնքը,
նստեցուց մարդը, եւ անոր ըսաւ սիրալիր
եղանակաւ.

— Ձեմ հասկնար թէ ո՞րպիսի կատակ է
այս: Դուք շնորհով մարդ մը կը նմանիք.
մաքուր էք. լաւ կը խօսիք. լաւ ձեւեր ու-
նիք. չարագործի մը տպաւորութիւնը չու-
նիք, եւ ես չեմ ուզեր պահել զձեզ: Բայց
սակայն պէտք է որ իրաւանց երեւոյթ մը
տաք ինձ, որպէս զի ազատ թողում զձեզ:
Ըրած բաներիդ բացարձակապէս անսովոր
բան մըն է. դուք պատճառ տուիք այն-
չափ մեծ բազմութեան մը ժողովուելուն, եւ
ընդունելի եւ ներելի չէ, որ ցերեկ ատեն,
Փարիզու մէջ տեղը, մարդ երեւի այն վի-
ճակին մէջ՝ յորում դուք գտնուեցայք: Ասոր
ի՞նչ նպատակի համար ըլլաւ աղէկ կ'ըլլայ

որ ինձի ըսէք. մենք վայրենիներ չենք, եւ
եւ չեմ ուզեր այս գործին տալ պէտք եղա-
ծէն աւելի կարեւորութիւն: Բայց ի՞նչ բան
եղաւ ձեր շարժառիթը: Արդեօք Ալէնի մէջ
լուացուելու՞ գագիթ: Ասի արգիլեալ է,
բայց վերջապէս... պարտապանցութեան
պատժով մը կ'ազատիք: Արդեօք ձեր ջու-
րին մէջ եղած ատե՞ն առին տարին հան-
դերձնիդ: Ա՛լ: Անանկ է նէ գրաւի մը հա-
մար ըրիք այս բանս: Արդեօք գիշերը քիչ
մը աւելի զուարթութեամբ ընթերցիք: Կը
տեսնէ՞ք, որ ես ինքնս բացատրութիւն մը
տալու միջոցները կը փնտռեմ: Բայց եթէ
բնաւ խօսիլ չէք ուզեր...

— Շատ երախտագէտ եմ ձեզ, պարո՛ն
պաշտօնեայ, ձեր առ իս յայտնած բարե-
սրտութեան համար: Դուք ինձի զգեստ
տուիք, ստակա ինձի թողուցիք, զիս ձանձ-
րոյթէ ազատելու փափաքով կը հարցաքննէք
զիս, ձեր այս բարի վարմունքին համար
չատ շնորհակալ եմ: Ես կ'ուզէի պատաս-
խանել այս ամէնուն՝ ձեզ տալով այն բա-
ցատրութիւնները զորս կը փափաքիք ու-
նենալ, բայց բոլորովին անկարելի բան մըն
է այս ինձի: Ես որոշած եմ բան մը չըսել
եւ կրել եւ հանդուրժել այս վիճակիս պատ-
ճառելիք ամէն հետեւութեանց: Եթէ պի-
տի խօսիմ բացուելիք հարցաքննութեանց
ժամանակ, այս ալ պիտի ըլլայ մի միայն
ձեր ազնիւ դիտաւորութեան եւ ձեր կա-
տարեալ քաղաքավարութեան յարգանքս եւ
մեծարանքս մատուցանելու համար:

— Կը ցաւիմ, պարո՛ն, այժմ ինձ կը մը-
նայ Ատենանին հաղորդել ձեր ձերբակալու-
թեան ատենադրութիւնն եւ խրկել զձեզ
ոստիկանութեան դուռը:

Քսան եւ չորս ժամու մէջ ոստիկանու-
թեան հարցաքննիչներէն մին հարցաքննեց
այս մարդս. եւ նա՛ նորոգեց իւր յայտնու-
թիւնը, բնաւ ո՛ր եւ է հոյսման պատաս-
խանել չէր ուզեր: Փոխանորդն այն ատեն
առաջին դժուարութեան մը հանդիպեցաւ.
վասն զի մարդ մը բանտի մէջ պահելու հա-
մար, պէտք է անոր անունն արձանագրել,
եւ արձանագրութիւնը պէտք է որոշ ըլլայ:
Շատ անգամ կը պատահի որ սուս անուն
մը կը տրուի թէպէտ, սակայն վերջապէս
անուն մը կը տրուի, եւ ասի բաւական
կ'ըլլայ: Կամ մէկը կ'ըլլայ, օրինակի համար

դատախազը, որ կը ձանձնայ դամբաստանեալը, եւ զանի կը նշանակէ ո՛ր եւ է կերպով մը: Այս պարագայիս մէջ ամենափոքր տեղեկութիւն մը չը կար: Եւ որովհետեւ ձերբակալեալը գտնուած էր Սէն-Նիքօլա անուն նաւահանգստին քով, բնականաբար ձերբակալեալը կոչուեցաւ Սէն-Նիքօլա նաւահանգստի մարդ, եւ երբ հարկ եղաւ արձանագրութիւն ընել, հետեւեալ յիշատակութիւնը նշանակուեցաւ մէջը. Տիւբօր (Նիքօլա): Յետոյ Նիքօլա Տիւբօր անունով որոշուեցաւ դատաւարութեան ժամանակ:

Իսկ ամբաստանութեան կէտերը չէին պակսեր: Նիքօլա Տիւբօր ամբաստանեալ էր անպարկեշտութեան, դատարկաշրջկութեան եւ մուրացկանութեան յանցանօք:

Բ.

Կէս գիշերուած տասներկուքը նոր դարկեր էր աղաքաստրեայ եւ ոսկեղէն Լուի Ժ-Կոչուած փոքրիկ ժամացոյց մը՝ որ դրուած էր Պօրտօ քաղաքը Պ. եւ Տիկին տ'Արվիլի ապարանաց մէկ ննջարանին մէջ: Տիկին տ'Արվիլը որ թեթեւ քուն ունէր, արթնցաւ ժամուն վերջին թնդիւնէն եւ տեսաւ որ իւր ամուսինն իւր քովը չէր: Ինքը պառկած էր տասն ու կէսին, որ ժամ իննին եւ կէս գիշերուան մէջ տեղ օրինաւոր միջոց մի է: Շատ ուշ պառկելու չէ, շատ կանուխ ալ պառկելու չէ:

Իրեն այնպէս թուեցաւ որ քնացեր էր, բայց չէր գիտեր ո՛րչափ ժամանակ: Գուցէ ժամը տասն եւ մէկ զարկած էր. կէսին՝ որ բնաւ տեղեկութիւն մը չէր տար, մտածեց որ դեռ երեսուն երկար վայրկեաններ ըսպասելու էր ժամը քանին ըլլալը գիտնալու համար, ուստի ելաւ անկողինէն:

— Կէս գիշերը կէս ժամ անցեր է, ըսաւ նորէն պառկելով: Ո՛ր դօցած կրնայ ըլլալ: Ի թատրո՞ն: Բայց թատրոնը խիստ մօտ է, պէտք էր տուն դարձած ըլլար: Ակրատեսիլն արդեօք: Բայց նա ինձ խոտացաւ որ մէյ մ'ալ հոն ոտք չ'կոխէ: Այսօր բնաւ տեղ մը ցայգահանդէս չի կայ: Զեմ կարծեր թէ սրճարան գացած ըլլայ: Արդեօք նա կարոն գետէն անցնիլ ուղեր է խօսքէնով մը եւ այն ալ ընկղմօր է: Բայց

նա բնաւ խօսքէն չը նստիր: Գուցէ գողերը վրան յարձակեցան: Դեռ երէկ գիշեր պատահեր էր այդպիսի բան մը:

Ժամը մէկն եղաւ նէ, ա՛լ չը համբերեց. բոլորովին ելաւ անկողինէն. ճրագներ վառեց եւ կարդալ ուղեց: Յետոյ իւր սենեկի սպասուհին կանչեց զանգակով.

— Տէրդ՝ բան մը չըսա՛ւ:

— Ո՛չ, Տիկին, դուրս ելաւ ըստ սովորութեան: Յետոյ ժամն երկուք, երեք եղաւ, եւ Սոթէն տուն չը դարձաւ: Այն տունն սկսաւ նամակ մը գրել.

« Սիրելիդ իմ Սոթէն .

« Ես քեզի ի՞նչ ըրի: Գու լաւ գիտես որ ես կը սիրեմ քեզ: Տասն տարի է որ ամուսնացեր ենք, ես ուրիշ զբաղմունք մը չունեցայ բայց քեզի հաճոյանալ, Նիքէ մէջերնիս բնաւորութեան դժուարութիւններ ծագեցան, ես ամէն բան յանձն առի զանոնք դիւրացնելու համար: Ես քեզ զոհեցի այն սովորութիւններն ու յարաբերութիւնները զորս դու չէիր սիրեր: Գրգռիչ վիճաբանութիւններէ խորշելու համար՝ բնաւ քեզի հակառակ չը խօսելու դրութիւնը ձեռք առի: Ալ աւելին ըրի: Գու ամէն պահանջներդ կատարեցի, եւ ես կրնամ խոստովանիլ եթէ դու չը խոստովանիս, թէ ես ամէն պարագայի մէջ քու կամացդ հպատակելու օրինակը տուի: Նիքէ իմ մրցումս միայն քու ցրտութեանդ դէմ ըլլար, դոնէ մխիթարութիւնս պիտի ունենայի մտածելով թէ շատ կիներ ինձմէ աւելի երջանիկ չեն: Բայց դու չես կրնար ուրանալ դորժած պակասութիւններդ. կնոջ մը դէմ գործուած ամենածանր սպակասութիւններ: Թէ որ ուրիշներն ըլլային, կը բարկանային, իրաւացի զանգատներ կ'ընէին, եւ գայթակղութեան եւ դժտութեան տեղի կուտային: Ես բան մը չըսի, բերանս չը բացի: Սպասեցի որ ժամանակը ջնջէ այս յիշատակը եւ այս յիշատակիս նորոգման առիթները նուազեցնէ: Մինչեւ անգամ զուարթերես երեւցայ միշտ, իմ պարտիքս իմ զայրոյթէս վեր դասելով, քեզի համար եղայ սիրալիր եւ հնազանդ ամուսին մը, եւ հարկ չէ ըսել միանգամայն հաւատարիմ: Եւ ահա զիս նորէն կը թողուս, առանց մտածելու թէ ի՞նչ վիճակի մէջ կը գտնուիմ ես մեր մարդոց, իմ ընտանեաց, մեր բարեկամաց եւ

աշխարհի առջեւ քու այսպէս երթալովդ :
Կ'աղաչեմ, դարձի՛ր : Եթէ դարձեալ քեզի
անհաճոյ բան մը կայ, ըսէ՛ ինձի, եւ ես
կ'աշխատիմ որ ա՛յն բանը մէյ մ'ալ ճրլայ :
Ես առանց քեզի շատ թշուառ եմ, եւ դու
շատ բարի ըլլալովդ իմ վշտանալս չես ուզեր :
« Կը փարիմ քեզ շատ տխրութեամբ ,
որովհետեւ հեռուէն փարում մի է , սա-
կայն խիստ գործովալի :

« Քեզ ա՛յնչափ սիրող կինդ
« ՀԱՆՐԻԷԹ »

Նամակ գրելը բան մը չէր . խնդիրը զայն
իւր տեղը հասցընելն էր . եւ Տիկին տ'Ար-
վիլ գրած ատենը ճանչցեր էր այս դժուա-
րութիւնս . բայց սկսեր էր գրել իւր վըշ-
տին աղատ ընթացք մը տալու համար , որ-
պէս զի նամակը կարենայ երթալ այս փա-
խստականին մէկ հետքը գտնուածին պէս :
Վասն զի չէր կրնար տարակուսիլ թէ պա-
րոն տ'Արվիլ թողած գացած էր . եւ այս
երրորդ անգամն էր որ կը պատահէր : Ա-
ռաջին անգամ յայտնապէս իւր արկղերը
պատրաստեր , կնոջը փարեր էր դեռ կառք
չը նստած , փողբիկ ճանապարհորդութիւն
մը պիտի ընեմ ըսելով եւ այնուհետեւ իւր
վրայօք բնաւ լուր մը չէր տուած : Թղթա-
տարով , հեռագրաւ եւ անձնուէր բարե-
կամաց միջնորդութեամբ որոշեր էր ետ
դառնալ : Երկրորդ անգամ , ելած գացած
էր պարզ պայուսակով մը , մինչդեռ իւր
կինը պատարագի գացած էր , եւ մարդու
չէր ըսեր իւր ո՛ւր երթալիքը . շատ շա-
բաթներ շատ յոգնութիւններով փնտռուե-
լէն վերջը ուր ըլլալը դիտցուեր էր , եւ
որովհետեւ չէր ուզեր վերադառնալ , հարկ
եղած էր որ կինն ինք երթայ առնէ զինքը
բերէ գրեթէ բռնութեամբ եւ հաստատէ
զինքը իւր ամուսնական բնակարանին մէջ :

Այս անգամ ա՛լ աւելի ծանր էր . իւր
աշխատութեան սենեակն եւ հանդերձա-
խուցը դիտելով հասկցուեցաւ որ բնաւ բան
մը չէր տարած իւր հետը , եւ ո՛չ իսկ փոխ-
նորդ չապիկ մը . գաւազանը ձեռքը դուրս
ելած էր , որպէս թէ փողոցին ծայրն եղող
մէկ բարեկամը տեսնելու գացած ըլլար :
Հետեւապէս լուսցածին պէս կանուխէկ
Տիկին տ'Արվիլ հօրը եւ մօրը տունը գնաց
եւ այս նոր դէպքս ծանոյց իրենց :

Թարգմանեց

ԿԱՍԹՕՆ ՊԵՐԺԸՐԷ

ԳԱՅՐԻԷԼ ԳՐԱՍԵՐԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԱՐՏԱՍՈՒԱՅ ՇԻՓ ՄԸ

Յօդեալ Օրիորդ Հայկանոյ Հասնազարեանի՝ իմ ամե-
նասիրելի սանուհւոյն տապանին վրայ .

Ո՛ Հայկանոյ դեռափրթիթ իմ սանուհին ,
Հրեշտակ գողտրիկ զուարթնոց ընկեր դու
անմեկին ,
Զի՞ այդքան շուտ փութացիր գնալ : Աստ
ի յերկրի
Բաւ չ'էի՞նք քեզ խանդաղատանք սէր մայ-
րենի :

Ե՛ր այդքան փոյթ , ո՛ սիրասուն իմ Հայ-
կանոյ .
Ծա՞նըր արդեօք թուէր կըրել ուսիդ ըն-
բոյշ
Այս կենաց բեռ : Այլ դու հաղիւ մի ման-
կուհի
Խիստ վաղ տուեր քո հըրածեշտ այս աշ-
խարհի :

Խիստ վաղ , այո՛ . խօլ եւ զըւարթ թըռչ-
նոց հանգոյն
Սլացար արագ , թողեր քո մայր , թողեր քո
բոյն ,
Մինչ նա կարծէր թէ նիրհէիր դու իւր գրիկի՝
Մի նոր զուարթուն յաւելեալ էր անդ ի
յերկնի :

Մընաս անլուր հեծեծանաց քո ծընողին ,
Ի՛ արբշիռ ի լուր ըաղցր մեղեդեաց եթե-
րային
Զորքս անշուշտ ի քաղցր աւազ երգեն յերկնի
իննեակ պարերն հըրեշտակաց երանելի :

Այլ հրճուիմ եւ քեզ երանի կարդամ
յաւէտ
Զի վաղ կենաց թողեալ յաւոցդ այս բեռն
անպէտ ,
Ընդ միշտ թողեալ վիշտ եւ թախիծ մեզ ի
բաժին
Վայելեա արդ ի խինդ ի սէր յաւերժագին :

Կնքեմ ահա քո ցուրտ տապան
Իմ արտասուաց դառն ցօղով ,

Որպէս երբեմն անդ յ'աւաղան
Սուրբ մեռոնի օրհնեալ իւղով .
Երթա՛ս բարեաւ լուսապսակ
Իմ Հայկանոյ՜ անմեղունակ :

ԳԱԼՈՒՍՏ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԺՊԻՏՔ ՄԱՅԻՍԻ

Ողջո՛յն, ողջո՛յն մեր հայրենեաց սարերուն,
Մայիս ժպտեց հովիտներուն, ձորերուն,
Սեւ սեւ ամպեր ցիր ցան եղան եթերէն,
Փողփող փայլին բոյլ բոյլ աստեղք ի վերէն .

Ո՛հ, գարնան օրեր նոր կեանք կը
բերեն :

Ա՛լ կը փթթին բուրեն ծաղկունք հոյ՛լ ի
հոյ՛լ,

Եւ կը շնչէ զեփուռն անոյ՜ սոյլ ի սոյլ,
Ա՛լ լեռներէն ջրնջ ջրնջ ջուրեր կը հոսին,
Պարտէզներէն գեղ գեղ թռչունք կը խօսին .

Կը ժպտի բնութիւն համայն մա-
յիսին :

Մեր հայրենեաց պարզ է երկին կապու-
տակ,

Սրփին սպածառ, փայլուն չողուն է լուսնակ,
Լերանց կողերն մայիս օծեց նոր հրապոյր,
Ամենուրեք սփռեց ծիծաղ, ժպտա, բոյր .

Ո՛հ, թիզ մի հողոյն ձօնեմ բիւր
համբոյր :

Յ. ԹԱԹԱՐԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Ա Ս Ա Յ Ո Ւ Ա Ծ Ք

ԵՐԳԵՐ ԱԿՆԱՑ ՇՐՋԱԿԱՑԻՑ

Պ. Դաւիթ Խաչկեան, որ Արաբկերի եւ Ակնայ
շրջակայ Հայ գիւղօրէից ժողովրդական երգերն ու
վեպերն հաւաքելու գովելի փափաքն ունեցած է,
հետեւեալն հաղորդած է մեզ ի հրատարակութիւն .
Կը խնդրենք այս առթիւ մեր գաւառացի և օտա-
րաբնակ թղթակիցներէն որ գաւառական բանաս-
տեղծութեանց կամ ասացուածոց հետ ջրկեն մեզ

նաեւ հարկ եղած բացատրութիւններն՝ բնագրին
հասկացողութեան համար, ինչպէս ըրած է Պ. Խաչ-
կեան :

ՄԱՅՐ ԵՒ ԱՂՋԻԿ

Գիշեր է եւ լուսինն աղօտ փայլով կը
լուսաւորէ չորս դին : Ամեն կողմ լուսթիւն
կը տիրէ : Մայրն լուսնի լուսնով բուռն !
կը հիւսէր եւ մերթ ընդ մերթ կը հա-
ռաչէր :

Աղջկէ.— Մայրիկ . . . դիտե՛ս . . . եթէ
աղբարս մօտիկ օրերս չը վերադառնայ Հա-
լէպէն, մեր հարսնցուն . . . պիտի նշանեն :

Մայր.— Զաւակս, սրբէ՛ աչերդ . Տէր պա-
պին եւ գիւղին իշխանաց գանկտեւ եմ :

Աղջկէ.— Ամէն օր դիս տեսնէ ու լայ,
ես ալ անոր հետ կուլամ :

Մայր.— Անհոգ եղիր . գիր ալ զրկած
եմ աղբօրդ . ան հիմա ձանձան է . Սաղմը-
կային՝ հարսանեաց տասն հինգ օր կայ :

Աղջկէ.— Ուրեմն մայրիկ ես երթամ լու-
սընկային դիմացը աղբօրս համար երկու
բան ըսիմ, որպէս զի չուտով հոս հասնի .
թերեւս երազ ալ տեսնեմ թէ եկել է . ու
կ'երգէ :

ԱՂՋԻԿ ԵՒ ԼՈՒՍԻՆ

Լուսնկան բրդաւ սարէն,
կէսն է խոր ու կէսն է բոլոր .
Քիչ քիչ ալ ի վեր եկաւ,
կու մանէր նորուկ թաղւոր :

Լուսնի քեղի գանկատ ունիմ՝
կեցի գանկտիմ՝ ալւէ՛ գնա՛ .
Գնա՛ իմ աղբօրն ըսէ՛
Զը կենայ թող ելնէ ու գայ .
Ուրբաթ շաբաթ թող չըսէ՛
Կիրակին թող առնէ ու գայ :

Աղջիկը զայս երգելով ննջեց լիայոյս .
զկէս գիշերաւ իւր նշդեհ՝ եղբայրը դուռը
բաղխելով հետեւեալ երգն մեղամաղձիկ իմն
կ'երգէ .

ՊԱՆԴՈՒԽՏ ՈՐԴԻՆ ԵՒ ԻՒՐ ՄԱՅՐ

Որդին.— Լուսնկան 'ւ երկան գիշեր
Ես ի քու գանակդ եմ եկել,
Դանակդ ալ ի գիր տեսայ
Ոլորով պարտէզդ եմ եկել :
Մայրիկ, մայրիկ դուռը բաց
Զիս քու որդեկիդ նման :

1 Գուլպայ . 2 Գիւղ մի յարաբեր մերձ ի Մա-
կերտ : 3 Անդրէն :

Մայրն .— Աչւեդ իմ որդւոյն աչւին,
 Ձանդ անոր ձանը չը նմանիր .
 Գնա առ գիւղին վերեւ
 Հելպէդ առ գիւղը խան ունի .
 Պառկէ անուշ քուն եղի
 Հելպէդ առ մութը լուս ունի :

Որդին .— Մութըն երթայ ու լուսը գայ,
 Մայրն ըզ եր ուղիկը ճանչնայ :

Մայրն զգածեալ որդւոյն խօսքէն, ճանչնալով եւ զիւր որդին, բանայ զդուռն ու աչօք բացօք կը տեսնէ իւրեան տարադրեալ զաւակն, քանզի ուխտած էր թէ՛ յորժամ տեսնէ իւր աչքին լոյսը թող կենազրաւ լինի :

ԴԱՏԱԿԱՆ

ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ
 Ի ՌԻՕ-ԵԱՆԵՅՐՕ

Մարդս երբէք սյնքան հնարիմաց չը լինիր որքան երբ ուզէ օձիքն աղատել տարփուհիէ մը որ դադրած է այլ եւս հաճոյ լինէ : Աւասիկ այն բարոյականը զոր կըրնանք քաղել զուարճալի դատէ մը որ վերջերս տեսնուեր է Բարիզի Պատժական ատենին առջեւ :

Ժողէ՛Ք Լաբլէ, սլաշտօնեայ նորութեանց վաճառատան մը մէջ, տասն եւ ութն ամիս առաջ հանրակառքին մէջ կը ծանօթանար տասն ու ութ ամեայ հրապուրիչ դերձակուհւոյ մը, Օր. Մառի Պէռնարի հետ : Երկու երիտասարդները շուտով բարեկամութիւն հաստատեցին : Աէն—Միշէլի կամուրջին եւ Բալէի Պուլվարին վրայ, զդուշութեամբ խօսեցան սրելէ նըլէ : Ի Շաթլըէ, խօսակցութիւնն աւելի աշխոյժ դարձուածք մ'առաւ :

— Ձեր ծնողաց հետ կը բնակիք, օրինորդ :

— Ո՛չ, մինակ եմ ի Բարիզ, միս մինակ : Ուստի չատ կը ձանձրանամ . . .

Բալէ—Ռուայալի հրապարակին վրայ, Լաբլէ գիտէր թէ իւր ընկերուհին կը կոչուէր Մառի եւ Օր. Պէռնար կ'իմանար թէ երիտասարդին անունն էր Ժողէ՛Ք :

— Ժողէ՛Ք, ի՛նչ սիրուն անուն, ըսաւ նորատի աղջիկը շիկնելով . «Եթէ» հօրեղբորորդի մ'ունեցած եմ որ այդպէս կը կոչուէր . . . :

Օրէնայի ծառուղին, երիտասարդն, որ մեծ Պուլվարները պիտի իջնէր, ցած ձայնիւ խնդրեց ճոխէնէն որ «ցոյց տայ իրեն տեղ մը ուր նմա հանդիպելու հաճոյքն ունենայ» :

Ժամադրութիւն տրուեցաւ նոյն իրիկուան : Եւ յաջորդ օրն, անկանոն ընտանիք մ'ուս աւելցած էր Բարիզի մէջ : Մառի իւր դոյզն կահերը Ժողէ՛Քի տունը տարաւ եւ երկու հոմանիներն ամսոյ մը չափ խենդի պէս սիրեցին զիրար :

Երկրորդ ամսուն վերջերը, երիտասարդըն, որ դիւրափոփօս սիրտ մ'ունէր, ըսկըսաւ անտանելի դտնել այդ միշտ միասին կեանքն : Այն ատեն է որ իւր տարփուհւոյն փոքր թերութիւններն, որք ցայնվայր այնքան շնորհալի թուած էին իրեն, իւր առջեւ մերկացան իրենց բովանդակ սոսկմամբ : Մառի նախանձոտ էր, որկրամոլ, պչրասէր, արծաթամոլ եւ եւ :

Այս կեանքը չա՛տ տեւած էր : Երիտասարդն ուղեց յարաբերութիւնները խզել . . անուշ տեղը կապելով :

— Սիրունիկս, ըսաւ առտու մը նորատի աղջկան, մեր բնաւորութիւններն իրարու չեն յարմարիր եւ երբէք չպիտի յարմարին : Օր մը չէ օր մը, չնչին վիճաբանութեան մը վրայ, իրարմէ պիտի բաժնուինք ծանր խօսքերով : Չսպասենք այդ վայրկեանին, եւ այժմէն իսկ բաժնուինք հաշտութեամբ, իբր լաւ բարեկամներ . . .

Այս առաջարկութեան վրայ, Մառի ջըղային տագնապ մ'ունեցաւ եւ սկսաւ մտաշիջ, թշուառական, անարգ կոչել իւր սիրահարն :

— Երբէ՛ք, ըսաւ, զքեզ չպիտի թողում, կը հասկընա՞ս, թշուառական : Երբէ՛ք, երբէ՛ք, եթէ դուն թողուս գիս, արջասպ կը նետեմ երեսիդ : Եւ գիտես որ ըսածս կ'ընեմ :

Գննի մը ամիս եւս Ժողէ՛Ք Լաբլէ կաղնի կաղնի քաշքշեց այդ կեղծ ամուսնական գընտակն որ ոտքին կապուած էր : Վերջ ի վերջոյ, ալ չը կրնալով դիմանալ, միւս կողմէ ալ չը համարձակելով ուղղակի խօսիլ բա-

ժաննան վրայ, մտածեց ճար մը գտնել ազատելու համար անտանելի աղջիկէն որ այնքան յուսահատանօք իրեն կառչած էր։ Երկար ատեն խորհեցէ յետոյ, հետեւեալ հնարքին կայանք տուաւ, որ՝ ի նկատ առնելով մանկամարդ աղջկան արծաթասիրտութիւնն՝ լաւագոյնը թուեցաւ իրեն։ Բըքէ Ժառնակի մէջ, զոր Մառի ամեն օր կը կարդար, սա կերպ ծանուցում մ'ընել տուաւ։

« Կը խնդրուի անոնցմէ որ գիտեն Օր. Մառի Պէռնարի հասցէն, բարեհաճին տեղեկագրել Պ. Օնտաֆէրէզի, նոտար ի Ռիօ Եանէյրօ, կամ իւր ներկայացուցչին ի Բարիզ, Պ. Լըգոնդ, գործակատար, Լաֆայէզ փողոց։

« Օր. Պէռնար ժառանգած է երկու միլիոն ռէալ։ »

Մառի կարգաց ծանուցումն. նախ եւ առաջ չուզեց հաւատալ իւր աչերուն։

— Անկարելի՛ է այս, անկարելի՛. . . երկու միլիոն ռէալ. . . ո՛րչափ շատ ստակ. . . որքա՛ն երջանիկ պիտի լինինք։ Այն ատեն այլ եւս գլխարկ չեմ չիներ, ոչ իսկ իմիններս . . .

Երկտասարդին խորհրդոց վրայ, Մառի գնաց անմիջապէս գտնել Պ. Լըգոնդ, որ, բնականաբար, Ժողէֆի բարեկամներէն մին էր։ Գործակատարն ընդունեց ծաղկահասակ աղջիկն կահաւորեալ դահլճի մը մէջ, ունկն դրաւ անոր խօսքերուն, քանի մը հարցումներ ըրաւ ծնողացը վրայ, ծննդեան վկայագիրը պահանջեց եւ խոստացաւ անմիջապէս տեղեկութիւն տալ Ռիօ Եանէյրօյի նոտարին։

Պատասխանը չուշացաւ։ Պ. Լըգոնդ հետեւեալ նամակը գրեց Օր. Պէռնարի.

« Օրիորդ .

« Աւասիկ պատճէնն հեռագրին զոր դեռ հիմա ստացայ Պ. Օնտաֆէրէզէ. « Որովհետեւ « մանկամարդ աղջիկն հաստատած ո՛վ լի- « նին, կրնայ գալ Ռիօ Եանէյրօ։ Իսկոյն « տամ երկու միլիոն ռէալ, ծախուց համար « հազար ռէալ պակասով։ Խնդակցութիւն « օրիորդին։ Սոք. Օնտաֆէրէզ։ »

« Ընդունեցէք, կ'աղաչեմ եւ եւ »

« Լըգոնդ »

Ժողէֆ խորհուրդ տուաւ իւր տարփուհւոյն անմիջապէս մեկնել։

— Ճանապարհորդութեանդ ծախքերը կը հոգամ, ըսաւ։

— Գլխարկ մ'ալ պիտի գնես ինձ, յաւելցուց Մառի. իմինս դունատեր է։

Երկու օր յետոյ, Մառի Պէռնար կը մեկնէր ի Ռիօ Եանէյրօ, ուր, հա՛րկ է ըսել, չէր գտնել Օնտաֆէրէզ անուն նոտար մը։

Ամեն տեսակ թշուառութիւններէ յետոյ, կրցաւ շնորհիւ Փրանսական հիւպատոսին բարեսրտութեան՝ վերադառնալ ի Ֆրանսա։ Բարիզ հասաւ անցեալ ամսոյ Յին։

Երկաթուղին իջնելուն պէս, առանց վայրկեան մը կորսնցնելու, ի խնդիր ելաւ իւր նախկին սիրահարին, զոր վերջապէս գտաւ նոր բնակարանի մը մէջ նոր տարփուհւոյ մը հետ կենցաղ վարելով։ Առանց աւելորդ խօսքերու, յայնժամ սքանչելի ապտակ մ'իջեցուց նորութեանց վաճառատան պաշտօնէին։ Տեսարանն այնքան աղմուկալի դարձաւ որ դրացիները վազեցին եւ կատաղի աղջիկը բռնելով՝ պահականոց տարին։

Ահա իւր այս վարման համար է որ Մառի Պէռնար դատուեցաւ Պատժական ատենին առջեւ։ Պ. Լօթէն Տրէյֆուսի մէկ պերճաւան դատավարութենէն յետոյ, հարիւր Փրանքի տուգանաց միայն դատապարտուեցաւ։

— Ասանկով չը լմնցաւ, գոչեց պարմանուհին դատաստանէն ելնելով։ Ես ահա կը սորվեցնեմ։ Ռէօ Եանէյրօյէն առո՛ր համար հոս եկայ։

(ՎՈԼԹԵՌ)

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐՔ

Թիի 21. (Մասի Թիւ 3814)

» 25. » » 3817)

» 26. » » 3818)

ԽՆԴԻՐ

Թիի 27.

Շրջանակի մը մէջ ներգծել մեծագոյն տարածութիւն ունեցող հաւասարաբոլոր եռանկիւնը։

Թ Ի Ի 28

Դիտենք Ա Բ Գ Դ ուղղանկիւնն : Բ և Գ կետե-
րէն կ'անցնենք շատ մը շրջանակներ : Δ կոչենք ա-
նոնցմէ մին : Սոյն Δ շրջանակն Գ Գ գիծն կը կտրէ
Ի Մ, իսկ Ա Մ գիծն ալ կը կտրէ զ Δ Ի Թ : Ապա-
ցուցանել թէ Թ կետին հետքն (lieu) շրջանակ մ'է :

ԽՆԴԻՐ ԹԻԻ 24

Լ ՈՒԾՈՒՄ Ն

Սոյն հատուածներն երկերկու հաւասար
են, իբր միւսնոյն կէտէն դժեալ շօշափողք :
միւս կողմանէ անոնցմէ երկուսին գումարն
եռանկեան մէկ կողին կը հաւասարի : Ու-
րեմն ϕ , + եւ ϕ կոչելով խնդրուած հատ-
ուածներն, կուենենանք հետեւեալ երեք
հաւասարութիւններն .

$$\phi + + = 412$$

$$\phi + \phi = 508$$

$$+ + \phi = 514$$

զորս լուծելով .

$$\phi = 202^\circ, + = 210^\circ, \phi = 304^\circ.$$

ԱՆՈՒԱՆՔԻ ԼՈՒԾՈՂԱՅ

Տ. Կ. Նաւասարդեան, Իզմիր

Տ. Մ. Սարրաֆեան Աշահ. Պէրպէր-
եան վրժրնի

ՇԱՐԱԹԱԿԱՆ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

2 Մայիս 1886

Հելլենական խնդրէն զատ, որոյ վրայ
պիտի խօսինք քիչ յետոյ, իրենց կարեւո-
րութեան աստիճանաւ քաղաքական աշ-
խարհի ուղը գրաւած են նաեւ իռլանտա-
կան, եգիպտական եւ պուրկարական խըն-
դիրք : Անգլիոյ Խորհրդարանը Չատկի ար-
ձակուրդէն յետոյ կ'զբաղի Պ. Կլատսդոնի
իռլանտական ինքնօրինութեան հռչակաւոր
Մրազրոյն երկրորդ ընթերցմամբ որ բռնուն
ընդդիմութեան կը պատահի : Ազատական
նախարարապետը խնդրեց Նրեափ. Ժողովէն

որ նախ սկզբամբ ընդունի ծրագիրն եւ ա-
պա վիճաբանի մանրամասնութեանց վրայ :
Հեռու չէ օրն ուր պիտի որոշուի այս սկզբ-
բան կէտն որ մեծ կշիռ ունի : Թայֆ եւ
Սթանֆորդ կը դուշակեն թէ Պ. Կլատս-
դոնի ծրագիրը պիտի մերժուի Խորհրդա-
րանէն :

Փանի մ'օրէ հետէ Եգիպտոսէն եւ Սու-
տանէն առնուած լուրերն յոյժ կարեւոր
են : Երբ Գահրէի մէջ օսմանեան և անդ-
բարձր Գոմիսէրք չեն կրնար համաձայնիլ
եգիպտական բանակին վերակազմութեան
եւ մանաւանդ Տօնկօլայի վերագրաւման
ծրագրոյն վրայ, որուն համաձայն չէ Լոն-
տոնի Դահլիճը, անդին Մէհտիին բանակն
յարձակողական շարժումներ կը փորձէ : Ա-
պըստամբք մեծ զօրութիւններ կը համա-
խմբեն ի Պէրպէր եւ ի Տօնկօլա որպէս զի
օգուտ քաղելով Նեղոսի ջուրք բարձրանա-
լէն, դիպ ի հիւսիս յառաջանան : Այժմէն
կը ծանուցուի թէ Սուտանցիք գրաւեր են
Աքալէհ կոչուած տեղն եւ մէկ մղոն եր-
կայնութեամբ երկաթուղոյ գիծ վերուցեր
են : Էճէլլէն Կաւէր երկիւղ կը յայտնէ թէ
ապստամբք այս ամառ գուցէ գրաւեն Վե-
րին Եգիպտոսը :

Պուրկարական խնդիր ըսելով ուղեցինք
յիշել միմիայն Աղեքսանդր Իշխանին վերա-
բերեալ լուր մը որ մեծ նշանակութիւն կ'ըս-
տանայ արդի պարագայից մէջ : Մասնաւոր
հեռագիրք կը ծանուցանեն թէ Պուրկարիոյ
Իշխանը կը պատրաստուի յառաջիկայ շաբ-
թու մէջ Լիվաթիա ուղեւորիլ իւր յար-
գանքները մատուցանելու Ռուսիոյ Կայսեր :
Աղեքսանդր Իշխանին այս յանկարծական
որոշումն, Արեւելեան - Բուժէլիի կուսակալ
անուանուելէն յետոյ, կերպ կերպ մեկնու-
թեանց առիթ կ'ընծայէ :

Միւս կողմէ կարծողներ կան, թէ այս
տեսակցութեան համար Ռուսիոյ արքունե-
եաց հետ սկսուած բանակցութիւնք աւար-
տած չլինելով, Իշխանին այցելութեան թը-
ռականը կրնայ փոփոխիլ ըստ պարագա-
յից :

Հելլենական խնդիրը զանազան երեւոյթ-
նիք ստացաւ շաբթուս մէջ եւ յանդեցաւ
նախարարական փոփոխման մը : Երբ Տէ-
րութիւնը (բաց ի Ֆրանսայէն) ի գործ դը-

րին իրենց սպառնալիքն, հեռացնելով իրենց դեսպաններն Աթէնքէն, եւ՝ Յունաստանի ընդդիմութեան վրայ անոր ծովեզերաց պաշարման ձեռնարկելով, Պ. Տէլեանիս հրաժարեցաւ : Նախարարապետը լռութեայն կ'ուզէր արդարացունել իւր այս անակնկալ ընթացքն, զգացունելով թէ մէկ կողմէ Եւրոպայի ճնշմանց եւ միւս կողմէ ժողովրդեան մտաց գրգռման մէջտեղ գըտնուելով, կորսնցուցած էր իւր գործերու ազատութիւնը : սակայն իրողութիւնն այն է որ Եօրկիոս թագաւորն իրաւամբ չուզեց ընդունիլ նորա հրաժարականն այդպիսի կենսական վայրկեանի մը մէջ : Պ. Տէլեանիս պնդեց, մինչեւ իսկ յայտարարելով թէ պաշտօնական բանալիները թողուվ պիտի հեռանայ : Երիտասարդ վեհապետին համար բաւական դժուարին գործ եղաւ նոր նախարարութիւնը կազմել եւ Ռէ-դէրի ու Հալիսի գործակալութիւնը երկուշաբթի օրէն ի վեր հեռագրեցին մեզ այնքան Յունաց անուաններ քան որչափ չեն հեռագրեր, սովորական ժամանակներ, մէկ տարուան մէջ : Այսօր Պ. Թրիքուքիս կը մերժէր, վաղը Պ. Քունտուրիօթիի խօսքը կը լինէր, միւս օր Պ. Բաքամիխալօրուլօս կ'ընդունէր եւ կը հրաժարէր : վերջապէս Աթէնքի վճռաբեկ Ատենի նախագահ Պ. Վալվիս յանձն առաւ կազմել նախարարութիւն մը : բայց իւր պաշտօնավարութիւն առժամեայ է եւ ուղղակի թագաւորին ներշնչման ներքեւ պիտի գործէ ցգուժարունմն Երեսօր, ժողովրդն որ յարտասովոր նիստ հրաւիրեալ է յառաջիկայ չաբթուան համար : Պ. Վալվիսի նախարարութիւնը քաղաքակտն ծրագիր չ'պիտի ունենայ եւ պիտի սպասէ Երեսօրոյսանութեան որոշման որ պիտի վճռէ երկրին բաղդը եւ յայնժամ ազդեցիկ նախարարապետ մը, հաւանաբար Պ. Թրիքուքիս կամ Պ. Տէլեանիս պաշտօնի գլուխանցնին :

Ուրեմն չաբաթ մը, եւ գուցէ քիչ մ'ալ աւելի սպասելու է, վերջնապէս պիտնալու համար թէ Յունաստանի ընդդիմութիւնը մինչեւ որ աստիճան առաջ պիտի տարուի :

* * *

Ազգային լրոց մէջ յիշատակութեան արժանի է Պատրիարքական Գեր. Փոխանորդ

Հօր ընտրութիւնն յառաջնորդութիւն Պուլկարիոյ և Արեւ. Բուսէլիի Հայոց : Խառն ժողովը նկատելով Ռուսճուգլեան Ս. Հօր բաղմամեայ ծառայութիւններն, այս պաշտօնն յարմարագոյն դատեց, նկատելով մանաւանդ որ Ն. Գերապատուութիւն անձնական տկարութեան պատճառաւ քանիցս հրաժարական տուած էր, իւր բնագաւառը (Պուլկարիա) քաջուելու համար : Խառն ժողովը որոշեց միանգամայն յիշեալ վիճակին վրայ Եպիսկոպոսական աստիճան տալ Գեր. Ռուսճուգլեան Հօր որ աստի ուղղակի էջմիածին պիտի ուղեւորի եւ ապա պիտի երթայ անցնիլ իւր նոր պաշտօնի գլուխը : Պատրիարքական Փոխանորդութեան համար քանի մը ընտրելեաց անուններ կը յիշուին, բայց վերջնական որոշում մը չկայ դեռ :

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ ընկերակցութեամբ Գեր. Խորէն Նար-Պէյ Սրբաղանի, չաբթուս մէջ Բերայի դեսպանատուններն երթալով, փոխադարձ այցելութիւն տուաւ Տէրութեանց ներկայացուցիչներուն որք Պատրիարքարան այցելած էին Զատիկէն ի վեր :

Ազգ. ժողովը այս ուրբաթ օր դարձեալ նիստ չըրաւ :
Տ. Ա.

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՅԱՅՏԱԳԻՐ 1886-87 ՎԱՐԺԱՐԱՆԱԿԱՆ
ՏԱՐՈՒԱՆ

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ Վարժարանը ունի Գերմանացեաց Կրթութիւն կոչուած Միջնակարգ Վարժարաններուն համահաւասար աստիճան, եւ անոնց պէս ինը դասարաններ, որոց իւրաքանչիւրին ընթացքը կը տեւէ մէկ տարի : Կը բաղկանայ Նախակրթարանէ, որ կը սարունակէ Ա. Բ. և Գ. դասարաններ, և Կրթարանէ, որ կը սարունակէ Դ. Եւ մինչեւ Թ. դասարանները : Ապագային պիտի բացուի նաեւ մի մասնագիտական շրջան եռամեայ ընթացքով :

Նախակրթարանի ուսմունքներն են հետեւեալները .

1. Կրօն, 2. Պատմութիւն, 3. Բնագիտութիւն, 4. Աշխարհագրութիւն, 5. Աշխարհաբառ Հայերէն, 6. Թուաբանութիւն,

7. Գեղադրութիւն, 8. Գծագրութիւն, 9. Զայնական երաժշտութիւն, 10. Մարմնամարզ և Զվիւթիւն, 11. Պարտիզպանութիւն, 12. Արհեստներու վարժութիւնք:

Կրթարանի ուսմունքներն են հետեւեալները:

1. Կրօն, (Սրբազան Պատմութիւն, Քրիստոնէական Վարդապետութիւն և Պատմութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ), 2. Պատմութիւն Ազգային, Օսմանեան և ընդհանուր, 3. Բնագիտութիւն, (Կենդանաբանութիւն, Բուսաբանութիւն, Հանքաբանութիւն, Երկրաբանութիւն, Բնաբանութիւն և Տարրաբանութիւն), 4. Աշխարհագրութիւն Բնական, Աստղագալխական, Քաղաքական և Վաճառականական, 5. Աշխարհագրաբան և Գրաբան Հայերէն, 6. Տաճկերէն, 7. Գաղղիերէն, 8. Անգղիերէն, 9. Փերմաներէն, 10. Ուսողութիւն (Թուաբանութիւն, Գրահաշիւ, Երկրաչափութիւն, Եռանկիւնաչափութիւն և Տոմարակալութիւն), 11. Գեղադրութիւն, 12. Գծագրութիւն և Նկարչութիւն, 13. Զայնական երաժշտութիւն, 14. Գործիական երաժշտութիւն (Դաշնակ և Զութակ), 15. Մարմնամարզ եւ Զնկութիւն, 16. Պարտիզպանութիւն, 17. Արհեստներու վարժութիւնք:

Գրաբար Հայերէնը և Տաճկերէնը կ'սկըսին Չորրորդ դասարանում, Գաղղիերէնը՝ հինգերորդում, եւ Անգղիերէնն ու Փերմաներէնը՝ վեցերորդում: Անգղիերէնն ու Փերմաներէնը եւ Գործիական երաժշտութիւնը կ'ամաւոր են, իսկ միւս բոլոր առարկաները՝ պարտաւորիչ: Աշակերտը կարող է ընտրել Անգղիերէն եւ Փերմաներէն ընդունելէն միայն մէկը, նոյնպէս Գործիական երաժշտութեանէն միայն մէկ գործի, այն է Դաշնակ և Զութակ:

Վարժարանիս գործատան մէջ յատուկ արհեստագէտ ուսուցիչներու ձեռքին տակ աշակերտը կը ստանայ իր կազմարարութեամբ, ատաղձագործութեամբ, իրականագործութեամբ եւ:

Վարժարանիս ներկայ շէնքին անձկութեան պատճառով 86—87 Վարժ. տարուան մէջ Առաջին դասարան չպիտի բացուի, որով Վարժարանս նոյն տարուան մէջ պիտի ունենայ միայն Նախակրթարանի Բ. և Գ. և Կրթարանի Գ. և Ե. դասարանները: Սահմանեալ թուով նոր աշակերտներ պիտի ընդունուին միայն Նախակրթարանի Բ. և Գ. դասարանները, և նոյն տարիէն յետոյ այլ ևս նոր աշակերտներ չպիտի ընդունուին, մինչև որ կառուցուի Վարժարանիս մեծ շէնքը, որ հաւանականաբար 3 տարիէն պատրաստ պիտի լինի:

86-87 Վարժ. տարիէն սկսեալ Վարժարանս կը դառնայ միայն գիշերօթիկ և ցերեկօթիկ աշակերտներ չեն առնուիր այլ ևս, նոր Զրիաւարժ աշակերտներ չեն առնուիր, զի նոցա թիւը լրացած է:

Թոշակաւոր գիշերօթիկ աշակերտներ կ'առնուին հետեւեալ պայմաններուն համաձայն.

1. Ընդունելի աշակերտը պէտք է լինի ութէն մինչեւ տասը տարեկան:

2. Ընդունելի աշակերտը պէտք է բերէ հետը ծննդեան, մկրտութեան, պատուաստի և առողջութեան վկայականներ:

3. Ընդունելի աշակերտը պէտք է կանխիկ վճարէ.

Մուտքի համար միանուագ	3
Զմուշիկի համար միանուագ	1/2
Նախակրթարանի համար տարեկան	18
Կրթարանի համար տարեկան	20

4. Գործիական երաժշտութիւն սովորողը իրեն առնաւոր տուրք պէտք է կանխիկ վճարէ տարեկան 3 օսմ. ոսկի: Զութակ սովորողը պէտք է նաև հոգայ գործին:

5. Աշակերտին տարեկան վճարը կը պարունակէ իւր մէջ ուսումնական և նիւթական բոլոր ծախքերը, այն է ուսում, սընունդ, հագուստ և ամեն տեսակ առողջապահական խնամք. ծնողը ստանձնելու չեն ուրիշ որ և է ծախք:

6. Եթէ աշակերտը տարուան ընթացքում որ և է պատճառով հանուի կամ բացակայ լինի Վարժարանէն, տրուած տարեկան վճարը չի կրնար յետ պահանջուիլ ծնողին կողմէն:

7. Ամառնային արձակուրդին, որ կ'սկըսի Յուլիսի կէսին և կը տեւէ մինչև Սեպտեմբերի 1ը, ծնողները, եթէ ուզեն, կարող են տուն տանել իրենց զաւակները, բայց երթեւեկութեան ծախքը իրենց վրայ է: Իսկ Վարժարանում մնացողներուն համար յատուկ վճար չի պահանջուիր:

8. Աշակերտ տալ ցանկացողները պէտք է մինչեւ Օգոստոսի սկիզբը ծանուցանեն իրենց որոշումը Վարժարանիս Տեսչութեան:

9. Աշակերտներուն մուտքը տեղի կ'ունենայ Սեպտեմբերի 1էն մինչև 14ը:

10. Որովհետեւ այս անգամ պիտի առնուին միայն սահմանեալ թուով աշակերտներ, ընդունելութեան մէջ նկատողութեան պիտի առնուի ծանուցումներուն կարգը:

Տեւրմէն Սանատեան Վարժարան

9. ՄԱՏԱԹԵԱՆ Ս. ՍՈՂԻԿԵԱՆ Գ. ԱՐՈՒԼԵԱՆ Կարին, 10 Ապրիլ 1886

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԻՐԱԳՐՈՅ